Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

8

ՂՈՂԱՆՋ ԵՂԵՌՆԱԿԱՆ

Խանգարե՞լ, ինչի՞ համար...
Գարուն էր: Չեկած ամառ՝
Փուլ եկավ երկնակամար,
Ձյուն մաղեց մեր բաց գլխին,
Ձյուն մաղեց՝ կրակի՛ պես...
-Գարուն ա, ձուն ա արել...
Գետերը մեր երերման
Հոսեցին՝ երակի՛ պես...
Արունը ջուր ա դառել...
Ձորերը շիրիմ դարձան,
Վիհերը՝ գերեզմանոց.
-Ջուրը մեր տունն ա տարել...
Ամեն քար՝ լուռ մահարձան,
Ամեն տուն՝ վառման հնոց.
-Բնավեր հավք ենք դառել...
Ինչքան բառ՝ ո՛ղջը մրմունջ,
Ինչքան երգ՝ ո՛ղջը լալով,

-Ջուլում էր, զուլո՛ւմ, լառ՛...
Թրի դեմ, սրի, հրի՝
Լոկ մանգաղ, լոկ բահ ու մաճ.
-Տնավե՛ր-բնավե՛ր լաճ...
Մեր հողը, մեր հայրենին,
Մեր երկիրն ամայացավ.
-Սև՛ հագիր, սևսիրտ մարե...
Հինավուրց տոհմիկ մի ազգ
Չմեռա՛վ, այլ...մահացա՛վ.
-Գարուն ա, ձուն ա արել...
Գարուն էր: Ամառ եկավ,
Ձագ հանեց ձորում կաքավ,
Իսկ հայը զրկվեց ձագից,
Իր պոռթկան թոնրի տաքից,
Իր մորից, հորից, յարից,
Իր բնից ու աշխարհից.
-Գարուն ա, ձուն ա արել...
...Ա՛խ, ինչպե՞ս, ո՞նց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.
-Աշխարքում ով մոռանա՝
Ջուխտ աչքով թող քոռանա...
Գառնարած - հովիվ - նախրորդ
Ետ չեկան սար-ձորերից...
Կեսօրին էլ ո՞վ երգեր.
-Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում...
Հնձվորը արտում մորթվեց
Իր ձեռքի սուր մանգաղով...
Խեղճ հարսը էլ ո՞նց երգեր.
-Քաղվորին հաց եմ բերում,

Բերանը բաց եմ բերում,
Ձկնորսը Վանա ծովում
Չփրկվեց ճարպիկ լողով...
Աղջիկը զո՛ւր էր կանչում.
-Իմ ծամթել տամ լողվորչուն...
Երկրի մեջ մարդ չմնաց՝
Մարդ թաղեր մարդու նման...
Ա՛խ, մնար մե՛կը գոնե
Ու կանչեր.
-Դլե յամա՛ն...
Ա՛խ, ինչպե՛ս, ո՞նց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.
-Աշխարքում ով մոռանա՝
Ջուխտ աչքով թող քոռանա...
...Ջահերը վառ մնացին
Ժամերգվող եկեղեցում,
Ժամհարին կախ տվեցին
Պարանից զանգակատան...
Ջաղացից աղուն բերող
Ալրոտված խեղճ գյուղացուն
Իր սայլը դագաղ դարձավ,
Ալյուրը՝ արնոտ պատան...
Մայրն ընկավ՝ ծիծը թողած
Իր թմբլիկ մանկան բերնում.
Ծծի տեղ ցից խրելով՝
Խեղդեցին մինուճարին...
Տատն ընկավ՝ ձեռքը մեկնած
Կչկչան հավի թառին.
Իր հիվանդ թոռան համար
Խորոտիկ ճուտ էր բռնում...

Կալի մեջ պապիկն ընկավ,
Իր ոսկե թեղն էր էրնում,
Որպեսզի տուրքը թուրքին
Օր առաջ շուտ վճարի...
Ով ծաղիկ հաց էր թխում՝
Խորովվեց թոնրի ծխում...
Ով հասել ուխտատեղի,
Վառել էր մոմը դեղին,
Մոմի դեմ իջել էր ծունր
Ու հայցում էր աստըծուն,
Որ բաշխի մի լաճ տղա,-
Իր արյամբ մոմը մարեց՝
Չավարտած «Տե՛ր, քեզ մեղա՛»-ն...
-Գարուն ա, ձուն ա արել...
...Խոցեցին ու ջնջեցին,
Հատեցին հաստ ու բարակ,
Հոշեցին ու տանջեցին,
Փշրեցին, տվին կրակ.
Վաթեցին արյուն-արցունք,
Ներկեցին ձոր ու բարձունք,
Քանդեցին երկինք մի լուրթ,
Մորթեցին մի ժողովուրդ,
Հացառատ մի ողջ աշխարհ
Սարքեցին փշրանք-նշխար,
Սո՛ւրբ նշխար՝ շա՛ն բերանում,-
Ուզեցին մի հայ թողնել,
Եվ այն էլ... թանգարանում...
-Գարուն ա, ձուն ա արել...

ՂՈՂԱՆՋ ԱՔՍՈՐԻ

Իզո՛ւր աստծուն պաղատեցին...
Ալա՛ն-թալա՛ն,
Կեռ յաթաղան...
Ում որ պետք էր՝ փողոտեցին,
Գազանաբար ճղոտեցին,
Խողխողեցին սրածելով.
Քարափներից ջուրն ածելով՝
Դիակներով խեղդվողների
Ծանրացըրին հոսք ու հոսանք,
Չհարցնելով մանուկ ու ծեր:
Եվ ո՞վ կոծեր,
Կուրծքը ծեծեր.
-Էս ի՛նչ քյաֆուր դարի հասանք...
Իզո՛ւր աստծուն աղաչեցին...
Թե բյուրերով հայ խաչեցին,
Հազարավոր այր ու կանանց
Անդող ձեռքով տեղահանած՝
Քշեցին... ո՞ւր.
Դեպի Դեր-Զոր:
Մերկ ու բոբիկ, խեղճ ու անզոր՝
Անցան նրանք ավազներով արաբական անապատի,
Մի շիրմուղի, ուր ամեն քայլ դիակներով ուղենշվեց,
Եվ նորացավ նո՛ր Գողգոթան՝
Ահագնացած տասնապատի՛կ...
Մեր փրկության աղաղակներն անցան իզուր,
Իզո՛ւր հնչեց ողջ աշխարհով մի ահազանգ,
Որ լոկ դարձավ, վերջիվերջո, թառանչ մի սուր.
...Էս ի՛նչ քյաֆուր դարի հասանք...
...15 թիվ: Ապրիլի 10...
Ապրիլական արբշիռ բույրեր,

Գարնանային ծաղկածլում,
Կանաչների շքահանդես,-
Եվ... ծաղկաբույր գիշերվա մեջ
Հեռուներից մոտենալով
Գաղտագողի-ծածուկ-անտես՝
Խորշակը նույն,
Որ շատ շուտով պիտի տաներ միլիոն հայեր,
Խորշակը նույն անցավ նաև
Պոլսո բոլո՛ր հայ թաղերով՝
Իր հրեղեն ոտների տակ
Խաշխշելով ու թաղելով
Վերջին հույսի շունչը մեր տաք...
Ահե՛ղ գիշեր,
Որ բորբ ներկվեց ո՛չ արևով,
Այլ մեր արյա՛մբ,
Ու կողոպտեց խորանները հայ կաճառի,
Խորանները հայ դպրության սուրբ տաճարի.
Բոլոր ճյուղերը կտրատեց
Հայ հանճարի
Ծաղկուն ծառի,
Ու մատյանից հայ մեղեդու
Ամենավա՛ռ էջը հատեց...
Եվ անունն՛ը, որոնք երեկ
Հնչում էին փաղաքշական մասնիկներով
Մերձավորի ու մտերիմ բարեկամի սիրող շրթից,
Ու հիրավի հպարտության տրոփ պոկում
Մի բովանդակ ժողովրդի լեցուն սրտից,-
Թե կյանք էին՝ հիմա հանկարծ դարձան անգո՝
Մի գիշերում, բարբարոսի կամք ու ջանքով
Ու մղումով անզսպելի

Փոխարկվեցին առասպելի.
Ապրող մարդուց հանկարծ դարձան
Մի մտովին կերվտած արձան...
Ա՛խ, Բերայի Բանկալթի թաղ...
Ա՛խ, Ղալաթիո եռատաճար եկեղեցի...
Քո դարավոր գմբեթի տակ
Իրիկնային ժամերգության սուրբ պահերին
Պատարագիչ Կոմիտասին չէ՞ որ երեկ
Լսում էին հիացմունքով Ջոհրապ... Սևակ...
Քանքարալից հազար գլուխ՝
Փոքր ու ավագ,
Միահավաք
Հակվում էին հայ մեղեդու սրբության դեմ
Ու հղանում նոր մեղեդիք՝
Հնչյուններո՛վ, խոսքո՛վ, գրչո՛վ,
Արձանակերտ նրբին մրճո՛վ,
Երանգների պնակի՛ մեջ.
Հետո, մեկտեղ ակրմբվելով
Բանկալթիի այնքա՛ն ծանոթ
Ու սիրելի տնակի մեջ՝
Խնդրում էին Վարդապետին՝
Երգել Կռունկ կամ Խնկի ծառ,
Երգել Չինար ես...
-Չինար ես՝ կեռանալ մի...
Սակայն ինչե՞ս չկեռանաս,
Երբ կացինն է բունըդ տաշում,
Երբ սղոցն է ճյուղըդ մաշում,-
Դե՛, արի և
...Կեռանա՛լ մի:
Ի՞նչ.

-Մեր դռնեն հեռանա՞լ մի...
Ա՛խ, ո՛ր շունը կհեռանար:
Իսկ եթե շուն, գայլ ու գազան
Կամ անխնա սրի քաշում,
Կամ աքսոր են բռնի քշում
Ամբողջ մի ազգ՝ սասա՛ն-սասա՛ն,-
Դե՛, արի և
...Հեռանա՛լ մի:
Ինչպե՞ս,
-Աստվա՛ծըդ կսիրես...
Բայց ո՞ւր է, ա՛խ, ո՞ւր է աստված,
Եթե կույր ու խուլ է աստված,
Եթե «Գթա»-ն զուր է ասված,
Նման աստծուն ինչպե՞ս սիրես...
Ի՞նչ:
-Հեռու ես՝ մոռանա՞լ մի...
Ո՞նց մոռանալ: Ե՛կ մոռացիր,
Որ ապրիլյան այն ահավոր
Ու ոճրապարտ լուսաբացին
Բարբարոսի խուժդուժ ձեռքեր
Սուրբ խորաններ կողոպտեցին՝
Խորանները հայ կաճառի,
Հայ դպրության սուրբ տաճարի,
Հայ հանճարի
Ծաղկուն ծառի
Բոլոր ոստերն անգթորեն կտրատվեցին,
Սուրբ մատյանից հայ մեղեդու,
Բոլոր էջերն ամենավառ
Դարձան մոլի հողմին ավար,
Մի գիշերում պոկոտվեցին ու զատվեցին,-

Շեկ աքսորի սև փակուղուց չազատվեցին
Ո՛չ մի հանճար,
Ո՛չ մի տաղանդ,
Ո՛չ մի քանքար՝
Ով որ Պոլսում եղեռնական այդ գարնան կար...
Մարդիկ, որոնք կամքով վերին
Անցնում էին և պիտի որ անցնեին դեռ
Իրենց ճամփան անմահության ու սխրանքի,
Բոլո՛րը մեկ՝
Հիմա արդեն կտրում էին ուղին մահվան,
Ճանապարհը աքսորանքի...
Մի-մի քուրմեր՝
Լեցուն բանիվ ու մեղեդով մեհենական
Հիմա պիտի ըմբոշխնեին
Թույնն ու լեղին գեհենական...
Դե՛, բերա՛ն բեր, որ չթքի,
Եվ քարե սիրտ, որ չճաքի:
Ու ձգվում էր ճանապարհը աքսորանքի:
Ձգվում էր նա հայ բրգացած դիակների ստորոտով,
Միջահասված մանուկների թաղում հայցող բլրի մոտով...
Մարտիրոսված հայ մայրերի կոնքերը սուրբ
Ուզում էին ամոթն իրենց փոշով ծածկել,
Դեղին փոշո՛վ,
Ո՛չ թե փեշով,
Որ և չկար,
Ինչպես չկար ո՛չ սրբություն,
Ո՛չ էլ աստված...
Լլկանքի մեջ նահատակված անմեղ կույսեր,
Ու լույս հարսեր,
Ջանում էին լանջերն իրենց ծածկել հողով անապատի,

Դեղին հողո՛վ,
Ո՛չ թե քողով,
Որ և չկար,
Ինչպես չկար ո՛չ սրբություն,
Ո՛չ էլ աստված...
Դե՛, շրթո՛ւնք բեր, որ չանիծի,
Դե՛, բեր բռո՛ւնցք, պրկված կռո՛ւփ,
Որ չդառնա քինահարույց կրքի խոյանք
Ու մխրճվի երկնքի մեջ՝
Իբրև նզո՞վք,
Ո՛չ, ի՛նչ նզովք.
Իբրև աստծու և երկնքի լիրբ հասցեին
Մի առնական թունդ հայհոյանք...
Իսկ աքսորի ճանապարհը վախճան չուներ:
Ավերակված հայ շեներից,
Իբրև նշան կենդանության,
Ահազարհուր ոռնում էին անբուն շներ՝
Հիմարաբար չըմբռնելով,
Որ այսուհետ
Շունը մարդուց ավելի է գերադասված
Նրա՛նց կողմից,
Որ կոչվում են մարդ ու աստված...
Բեկված սնե՛ր,
Այրված շենե՛ր
Եվ մարդկանցից գերադասված անտուն շնե՛ր,
Որ երեկվա իրենց տիրոջ
Լուռ դիակն են նախ հոտոտում,
Ոռնում՝ կարծես այրվող ցավից,
Ոռնո՛ւմ, վնգո՛ւմ,
Մե՛կ օր, երկո՛ւ,

Հետո՝ մղված ծանըր սովից՝
Երեկ իրենց կերակրրող ձեռն են ուտում,
Գոմռալով իրենց տիրոջ դին հոշոտում...
...Ճանապարհն այս դժոխային
Կարող էր և անվերջ տևել,
Բայց սարսափի օրն է մթնում,
Եվ քարվանը արդա՛ր-արդա՛ր,
Եվ քարվանը մահապարտյալ
Չանկըրըի բանտն է մտնում:
Բանտ թուրքակա՛ն
Եվ պատրաստված... հայի՛ համար.
Քստմնելի լկանքների՛,
Անպատվությա՛ն,
Ոչ թե արդեն երազելի մահի՛ համար,-
Մի բախտ դժխեմ,
Մի անողորմ ճակատագիր՝
Հիմա արդեն ո՛չ անմարմին, ո՛չ էլ անգո,
Այլ զնդանի դռան առաջ պահակացած
Թուրք ասկյարի արյունկզակ կերպարանքով...
Եվ այդ պահին.
-Տէ՛ր, ողորմեա՛...
Առավել, քան երբևիցե,
Եվ ավելի, քան այլուրեք,
Այնքա՛ն տեղին, ժամանակի՛ն,
Ա՛խ, Վարդապե՛տ, գութ է հայցում
Տխրալալուկ ամբողջ մի ազգ
Քո սևասուգ սուրբ բերանով.
-Տէ՛ր, ողորմեա՛...
Եվ զնդանում նեղ ու անձուկ
Պղպըջում է մի լայն փղձուկ,

Մի տաք փղձուկ տղամարդկա՛նց,
Որ եղեգան իրենց փողով
Թունդ են հանել սիրտը դողով.
Որ սրտառուչ իրենց տողով
Ու երգերով իրենց թովիչ՝
Գարնա՛ն նման լոկ վրդովիչ,
Ծայր են տվել շիթ արցունքի՝
Ո՛չ թե ցավի կամ տրտմության,
Այլ հուզառատ հիացմունքի՛...
-Յաղագըս հարց, եղբարց, մերոց,
Որք են տարեալ ի գերութիւն,
-Տէ՛ր, ողորմեա՛...
Իսկ հայրերը արդեն չկա՛ն,
Եղբայրներին թուր ու ձգան,
Վերջ են տվել սար ու ձորում,
Ուր ջրի պես ու ջրի հետ
Տաք արյունն է նրանց ծորում...
-Շիջո՛ զհուր վառ հնոցի,
Փրկեա՛ զմեզ, ամենագո՛ւթ...
Բայց աղոթքից այդ ի՛նչ օգուտ,
Թե հնոցի
Ահեղ բոցին
Կուլ է տրված հայոց աշխարհն,
Ա՛զգը հայոց՝ ցախի պես խառն...
-Հայցեմք ի քեն արտասուելով
Եվ պաղատիմք զայս ասելով.
-Տէ՛ր, ողորմեա՛...
Ի՞նչ էր պահում վաղը նրանց՝
Հանճարավոր այս մեծ արանց,
Ի՞նչ մի վախճան բարբարոսի.

Անշուշտ՝ զոհի՛, ո՛չ հերոսի...
-Ընկալ զմեր աղաչանքս,
Լո՛ւր, գթառա՛տ, և ողորմեա՛...
Ա՛խ, թե լսեր ու գթառատ եթե լիներ՝
Գազանադեմ այս խուժանին նա կզինե՞ր
Ու շա՞ղ կտար դաշտ ու սարին՝
Ակնից - Արճեշ,
Վանից - Կարին...
-Ցո՛յց մեզ զքո ողորմութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութի՛ւն...
Խաղաղությո՛ւն...
Եթե այսպես գնար քիչ է՛լ,
Մեկ էլ տեսար՝ խաղաղությունն իրո՛ք իջել,
Վեր է ածել շեն աշխարհը մի շիրմատան,
Ուր այլևըս չեն էլ ճարվի ապրող մարդիկ,
Որ բյուրավոր հանգչողներին երանի տան...
-Տէ՛ր, ողորմեա՛...
Ո՛չ, Վարդապետ, ո՛չ, չողորմա՛ց,
Իսկ քեզ պատժեց պատժով մի նոր՝
Չառավ հոգիդ,
Ինչպես առավ նրանց հոգին,
Որոնք մյուս օր՝
Շիկադեղին անապատի ավազի պես ծարա՛վ-ծարա՛վ,
Աստվածային աչքերում՝ սով,
Չսնվելով նույնիսկ հույսով,
Անգամ թրից կամ գնդակից չխոցվեցին,
Այլ պարզապես... այլ պարզապես... քարկոծվեցին...
...Ի՞նչ էր արդյոք այն պատճառը,
Որ քեզ զատեց
Եվ անջատեց

Քո բախտակից ու սրտամոտ ընկերների դժխեմ բախտից՝
Քարկոծվողի սուղ դրախտից
Քեզ նետելով մի լայն դժոխք,
Ուր ո՛չ մահ կար,
Ո՛չ կյանքի շողք:
Ա՛խ, նրանցից ինչի՞ համար քեզ զատեցին,
Քեզ - այդքա՛ն ուշ - ինչի՞ համար ազատեցին:
Եթե դա՛ էր ազատելը...

ՂՈՂԱՆՋ ՄԹԱԳՆՈՒՄԻ

Ա՛խ, եթե դա էր...
Գթառատ Տերը
Թո՛ղ որ ազատի իր ազատելուց...
Ինչ է դաշնամուր և ինչ է ստեղ՝
Մոռացա՛ն նրա ճարտար մատերը...
Ինքը Բանկալթու իր տան մեջ, այստե՛ղ,
Եվ Չանկըրըի բանտի պատերը
Արդեն նրանից շատ-շատ են հեռու,
Բայց ուղեղի մեջ... բայց ուղեղի մեջ,
Կարծես թե կպած նրա թաղանթից՝
Մթան մի քուլա եռո՛ւմ էր - եռո՛ւմ,
Մերթ իբրև ինչ-որ անմարմին զեռուն,
Մերթ իբրև ջրի խաշող գոլորշի,-
Պտույտ էր տալիս ծանր ու բոլորշի,
Պտույտ էր տալիս
Ու պոկ չէր գալիս...
Երբ անցնում էր նա Բանկալթու մայթով՝
Մի ձայն էր հնչում
Հաճախ ականջում.

Թվում էր՝ ձայնեց իր Սիամանթոն,
Թվում էր՝ իրեն Դանիելն է կանչում...
Իրիկնանալիս իր տան սրահում
Թվում էր՝ տեսավ զենք ու զրահում
Այն վարազաղեմ տաճիկ ասկյարին,
Որ ձեռքը տարավ շիկացող քարին,
Ո՛ւ... ճչում էր նա,
Ճչում սոսկալի
Եվ իսկույն վառում մոմեր ու կանթեղ:
Վառում էր, նըստում: Ու մեկ էլ հանկարծ
Աչքերն էր շրջում այստեղից-այնտեղ.
Արյո՛ւն էր թվում բոցը կանթեղի...
Ու փչում էր նա մոմեր ու կանթեղ...
Վեր-վեր էր թռչում հաճախ անտեղի,
Ավելի հաճախ... լինում էր այնտե՛ղ,
Լինում էր... այնտեղ՝ իր Հայաստանում՝
Կարինում, Մուշում, Վանա ոստանում...
Ինքը՝ Պոլսո՛ մեջ,
Իսկ մի՛տքը՝ այնտե՛ղ...
...Ասում են՝
Այնտեղ՝
Հայաստան կոչված անհայ աշխարհում,
Կուժկոտրուկները, որոնց մոմագույն ծաղկաթերթերից
Փռվում էր չորս կողմ գինու թանձր բույր,
Հիմա
(Եվ ընդմի՞շտ)
Կարմիր են հագել
Ու գինու բույրը փոխարկել արյան մի ծանրը հոտի,
Որ գրգռում է քոչվոր քրդերի նախրի պնչերը:
Իսկ գեղեցկապաշտ բաղեղը կանաչ,

Որ չի ախորժում տգեղություններ,
Լուռ մագլցում է քարափներն ի վեր,
Որ իր սեփական կանաչ թևերով
Արյամբ ողողված ժայռերը ծածկի,
Շղարշի քերծեր,
Որոնց դուրս պրծած ցցերից քարե,
Ինչպես ժանիքից,
Թեպետ չուզելով, բայց ծածանվում է պատմաբան քամուց
Հայ հարս ու կանանց երբեմնի գունեղ տարազից մի մաս՝
Արևի՞ց արդյոք,
Թե՞ իրենց կրած անլուր սարսափից
Այժմ գունաթափ, այժմ ճերմակած,-
Թեպետ չուզելով, բայց ծածանվում է պատմաբան քամուց,
Իբրև պատվավոր ինքնասպանության սպիտակ դրոշ...
Իսկ այն ծերպերը,
Որտեղ մագլցել չի կարողանում բաղեղը նույնիսկ,
Ու տեղ չի գտնում քարաքոսն անգամ,
Կարմի՛ր ծերպերը՝
Մեկ՝ երկար, մեկ՝ կարճ սյուներով ճերմա՛կ,
Նման վիթխարի քարե բացօթյա մի երգեհոնի
Հայոց լեռների ամֆիթատրոնում,-
Իսկ այդ ծերպերը տնքում են խեղճ-խեղճ
Լսողությունից բոլորովի՛ն զուրկ,
Երգ ու նվագից բա՛ն չհասկացող
Բարբարոս քամու պաղ մատների տակ,
Երգեհոնի պես նույն տակտն են տնքում.
-Այս ի՞նչ պատահեց...
Այս ի՞նչ պատահեց...
Իսկ հիմար կկուն,
Որ իր թռչնային անթոհիչք խելքով

Զգում է թեպետ, բայց չի հասկանում, թե ի՛նչ պատահեց,
Միամի՞տ կկուն
Ամեն գարնան հետ ընդմիջումներով եթեր կճամփի
Իր հայրենականչ ազդանշանը հեռագրային.
Կո՛ւ-կո՛ւ-կո՛ւ (լսե՞ք),
Կո՞ւ-կո՞ւ (ի՞նչ եղաք)...
Ա՛խ, իզո՞ւր կկուն կազդանշանի.
Ովքեր մեռել են՝ չեն լսի նրան,
Ովքեր կցրվեն աշխարհի վրա
Մի բուռ գարու պես՝ հավերի առաջ,
Մի կուց արյան պես՝ պղտոր ջրերում,
Թեկուզ և որսան ազդանշանը՝ սրտերո՛վ իրենց,
Բայց չէ՞ որ, ավա՛ղ, չէ՞ որ կարող են լոկ պատասխանել
Կարոտից մարող սրտի բաբախմամբ,
Կսկիծից թացվող թարթումով կոպի,
Ջայրույթից ուռչող երակի զարկով,
Սակայն ո՛չ երբեք
Ուրախ ու զվարթ վերադարձողի քայլով կենսաթինդ.
-Դո՛փ-դո՛փ (գալի՛ս ենք),
Դը՛փ-դը՛փ-դը՛փ (եկանք)...
-Դե, ե՛կ, Վարդապե՛տ,
Մի՛ խելագարվիր...
...Այնտեղ՝
Երկնաչու Սասնա լեռներում,
Ժայռեր ու ծերպեր մագլցելու մեջ
Ընկուզենիներն անգամ մրցում են իշայծյամի հետ՝
Նրանց ճյուղավոր եղջյուրների պես
Բուսնելով ժայռի մազոտ ճակատին...
Եվ այնտեղ՝
Սասնա սարում ու ձորում՝

Ծառի տերևին,
Փշերի վրա,
Մանանայի պես գազպեն էր ծորում,
Որ շինականը գար ու հավաքեր:
Սակայն...երկնային մանանան փոխվեց
Երկրային ահեղ մի պատուհասով...
Եվ հիմա այնտեղ՝
Հին Ծովասարի քարերի վրա
Գառնարած Դավթի երկաթ տրեխի թողած հետքերում,
Ինչպես խաղալիք - փոքրիկ գուռի մեջ,
Անձրևաջուրն է քմծիծաղ տալիս
Պաղ կիսալուսնի ներում ակնարկող բառերի վրա...
Սասնա վիպական Մարութա վանքում
Ուխտավորի տեղ բուերն են տնքում՝
Այս փուչ աշխարհի բանը խորհելով...
Ընկույզի վրա ընկույզն է փտում.
-Հավաքո՛ղ չկա...
Ոչխարներ վայրի ու վայրենացած
Բարձրիկ սարերից անվախ իջնում ցած,
Հասնում են մինչև Մշո բաց հովիտ.
-Կրակո՛ղ չկա,
Նույնիսկ գո՛ղ չկա...
Խմորի տաշտում ցնկնում է կատուն.
-Նկատո՛ղ չկա...
Եվ տանու կովեր,
Թեպետ մոռացած գոմեր ու մսուր,
Ըստ սովորության
Տանջվում են սաստիկ
Իրենց սափորված-լեփլեցուն կրծից.
-Որ կթո՛ղ չկա,-

Եվ խուլ բառաչով քարերի չեչոտ ափին են քսում.
-Որ խտո՛ւտ չգա...
Արջերն են լիզում Սասնա մանանան
Եվ փորկապ ընկած՝
Թավալ են տալիս հին տաճարների սուրբ խորաններում՝
Իրենց ոռնոցով Ձենով Օհանի տնազն անելով.
Էլ չե՛ն վախենում Սասնա ծռերի ուրվականներից...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Եկ ու մի՛ ծռվիր...
...Լուսաստղն այնպես պայծառ է շողում Նեմրութի վրա,
Ասես աստղը չէ,
Այլ մի պղնձե նոր կլայեկած թաս է հովվական,
Իսկ Կաթըն-Ծիրը
Օտարերկրացուն պարզապես ճերմակ մի ամպ է թվում...
Եվ հայի որդին,
Հրաշքո՛վ փրկված հայի խեղճ որդին
Օտար ճամփորդի իր անձնագրրով
Եթե երբևէ ոտքով համբուրի փեշը Սիփանա,
Թերևս պիտի Վահագնի ճամփան
Նո՛ւյնպես շփոթի ճերմակ ամպի հետ...
- Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Ու մի՛ ցնորվիր...
...Իջել է այնտեղ մի ծույլ լռություն սարդոստայնային,
Որ հորանջում է՝ ականջ դնելով,
Թե ե՞րբ կշտացած գայլերը գոնե պիտի գկրտան.
Ինչքան չլինի՝ ձայն է կենդանի:
Եվ որովհետև գայլը սակավ է հագեցած լինում,
Էլ ի՞նչ է մնում,
Թե ոչ մրափել
Քուն բերող «շարքու» նվագի ներքո,

Երբ բախտը բերի՝
Տարվա մեջ մի օր
Այս բնակազուրկ վիլայեթը գան
Ջաբիթ-ոստիկան...
Տարին մեկ անգամ մրափ հարուցող նվոցը «շարքու».
Ո՛չ Ծիրանի ծառ,
Ո՛չ Մոկաց Միրզա,
Եվ ո՛չ Փեսին գովք.
Չպիտի ծորա Հորովել-ն այստեղ,
Ո՛չ Լուսնակն անուշ,
Ո՛չ էլ Կալի երգ.
Հայաստան կոչված անհայ աշխարհում
Չպիտի՛ հնչի հայ պարեղանակ,
Հայ երգ
Ու Խաղիկ...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Եկ ու մի՛ ցնդիր...
...Եվ գեշ գոմշի պես
Գիշերը պիտի ծանրորեն պառկի՝
Իր եղջյուրներին երկինքը պահած,
Ու լուռ որոճա մի կերպ կուլ տված նախճիր ու ոճիր,
Որ հեշտ չի մարսում անասո՛ւնն անգամ...
Մութի թանաքը
Պիտի ողջ գիշեր եղեռնի մասին եղերերգ գրի,
Բայց առավոտյան թանձրը թանաքը կջնջվի այնպես,
Ինչպես... արյունը և Հարցը Հայոց...
Իսկ առավո՛տը...
Նա ամեն անգամ
Երեխայի պես աչքը կբացի միամտորեն,
Եվ ամեն անգամ այնպե՛ս կթվա,

Թե ոչի՛նչ-ոչի՛նչ կյանքում չի փոխվել.
Ուր որ է մայրը բակից ձայն կտա իր քնկոտ որդուն՝
Ցնփոր խնոցու շըմփ-շըրմփոցը մի պահ կտրելով...
Եվ գյուղի վրա նորից կալիքվի նախրի բառաչը,
Այգիների մեջ ծովի հառաչը ծաղիկ կթափի...
Ջուրը՝
Մարգերի փխրուն թմբերը մկան պես ծակած՝
Լորտուի նման առաջ կսողա...
Մոտիկ արտերից,
Առը շուռ տալիս,
Խոփը կփայլի հայելու նման,
Եվ շողքը կընկնի դրացու հարսի շարմաղ երեսին՝
Նրան մի վայրկյան ահաբեկելով.
-Ամա՛ն, այ ամա՛ն,-
Այդ ո՞ր ջահելն է սիրտ անում նրա դեմքին շողք գցել,
Իսկ թե իր մարդը իմանա՞ հանկարծ,
-Ամա՛ն, այ ամա՛ն,-
Իսկ թե իր մարդը իմանա՞ հանկարծ՝
Արյո՛ւն կթափվի...
Իսկ առավոտը,
Երբ ամեն անգամ աչքերը բացի,
Մի պահ խաբվելով երեխայի պես՝
Քիչ հետո արդեն նա իրեն կզգա հայի որբ մանչուկ.
Կուզենա կանչել,
Բայց ձա՛յն չի ելնի,
Կուզենա լացել՝
Արցունքնե՛ր չկան,
Կուզենա գոնե - վերջապես- մեռնել,
Բայց... մա՛հ էլ չկա.
Չէ՞ որ սերում է Փոքրը Մհերի «անիծված» սերմից...

-Դե ե՛կ Վարդապե՛տ,
Ու մի՛ խենթանա...
Մշո լայն դաշտում,
Ծայրից մինչև ծայր,
Անվերջ կսուրա կարոտյալ քամին
Եվ մեն-մի հատիկ երդիկ չի գտնի,
Որ դուրս պոռթկացող ծուխը խլելով՝
Վայրի կատվի պես քինոտ գզգզի կծիկը նրա...
-Դե ե՛կ Վարդապե՛տ,
Եկ ու մի՛ գժվիր...
Բյուրակն էր կանչում,
Օսմանցին եկավ
Եվ, թարգմանելով, Բինգյոլ անվանեց.
Տաս հազար աղբյուր,
Տաս հազար լճակ:
Եվ հիմա... հիմա
Այդ տաս հազարն էլ մարդ են երազում,
Որ գա ու թեքվի իրենց ակունքին,
Իրենց ափունքին,
Իրենց հայելում իրեն տեսնելով՝
Ծարավը կոտրի՝
«Օխա՛յ» ասելով,-
Թե չէ ի՛նչ աղբյուր,
Թե չէ ի՛նչ լճակ,
Թե չէ աղբյուր ես՝ լճակ կդառնաս,
Թե չէ լճակ ես՝ կդառնաս ճահիճ,
Կդառնաս տանը պառաված օրիորդ,
Մինչդեռ հարսնության առողջ բնազդը խտուտ է տալիս,
Մինչդեռ մայրական սուրբ հիվանդության
Նույնիսկ ծաղիկը ծեծելուց հետո

Քորը չի՛ անցնում...
Եփրատ էր կոչվում
Եվ... Մուրադ ասվեց,
Ջհանդամի գյո՛ղը, թող կոչվեր Մուրադ,
Միայն թե գետը գետություն աներ՝
Գերաններ տաներ
Եվ ոչ թե դիակ,
Առվույտի խրձեր, կոճղեր ափ հաներ,
Եվ ոչ թե գանգեր, ուսեր ու թիակ...
Միայն թե գետը գետություն աներ.
Գեղջուկը բաներ,
Տնկեր ու ցաներ,
Գետն էլ իր ջրով մեկը տասն աներ,
Խոր քարափների ամայության մեջ
Նրա ջրերով աղորիք բաներ...
Բայց հիմա... հիմա
Էլ ի՛նչ վար ու ցանք,
Էս ի՛նչ բան ու ջանք
Եվ էլ ի՛նչ ջրտուք,
Էլ ի՛նչ ջրաղաց:
Ինչպես մտքի մեջ հասուն աղջիկն է տեսնում մատանի,
Գետն էլ կամուրջ է միայն երազում:
Ու... խեղճ Եփրատը կամուրջ է տեսնում... լոկ երազի մեջ...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Մի՛ խելագրկվիր...
-Քանի՞ ժողովուրդ Վանա լիճ ունի,-
Օտար գրքերում և օտար լեզվով
Օտար մարդիկ են այս հարցը տալիս,
Եվ ոչ թե Վանից զրկված վանեցին,
Որ հար՛ց չի տալիս, այլ հաստա՛տ ասում.

-Էս կյանքում՝ մեր Վան,
Էն կյանքում՝ դրախտ...
Ա՛խ, Բիայնայի ու Բզնունիքի,
Տուշպա և Վանա սրտաձև՛ ծովակ:
Վարագա սուրբ սար,
Սիփան ու Նեմրութ
Իրենց ստվերը - ուռկանի նման - նետում են այնտեղ
Եվ տառեխի տեղ
Որսում են գույներ, որ անո՛ւն չունեն,
Որ անո՛ւն չունեն...
Իսկ Այգեստանի բույրերից արբշիռ
Եվ Արտամեդի հոտերից գինով՝
Խոր քուն է մտնում քամին Ոստանում,
Այն խնձորենու հոծ սաղարթի մեջ,
Որի պտուղը թափահարելիս
Լսում ես նորից
Ձույլ կորիզների իրար զարնումը՝
Դեղին սաթերի հատիկների պես:
Փրկված վանեցին այսուհետ միայն իր երազի մեջ
Կարող է լսել այդ ձայնը ծանոթ և օտարոտի...
-Եթե խելք ունես՝
Եկ մի՛ թոցըրու...
Նույն Այգեստանում
Ու նույն Ոստանում
Եթե զարթնում է գինովցած քամին,
Ապա զարթնում է ծոցվոր ծառերից կաթող մրգերի
Թմփոցից միայն,
Եվ գինովցածի մոլոր քայլվածքով լճափ է նետվում,
Որ նրա ջրով քիչ զգաստանա:
Ու տաքուկ քամու մոտիկությունից

Յատուկ Պոէմ

Լիճը - կնոջ պես - սրսըփում է լուռ
Եվ, ամաչելով սուրբ Աղթամարից,
Մեղա է գալիս՝
Իր ալիքները ձեռքի պես մեկնած...
Ա՛խ, ալիքնե՛րն այդ,
Այդ ալիքնե՛րը...
Ձիգ ամիսներով ջուր ու օճառի երես չտեսած
Տավարածն անգամ
Թե մերկանալով մտնի Վանա ծով,
Իրեն լավ թրջի ու դուրս գա ջրից՝
Կեղտի ո՛չ մի հետք,
Եվ մաշկը մեկեն թավիշ է դառնում՝
Անցուլ երինջի կոնակի նման...
Վանեցին ուրեմն օճառ չեր առնում
Եվ հարստացավ ա՞յդ դրամներով,
Թե՞ Շամիրամի դարավոր առուն
Այգիների մեջ,
Արտերի վրա,
Հանդում ու ձորում
Ոսկի էր փոում...
Ա՛խ, Վանա ծովակ...
Երբ մութն էր թառում Սիփանա գլխին,
Նեմրութի լանջին
Եվ ուղղահայաց քարափին Վանա,-
Ջնջելով անջինջ սեպագրերը,-
Ծովակի վրա երբ մութն էր թառում՝
Երկինքը համակ հեզ շուռ էր գալիս ջրերում ծավի,
Եվ ալիքների աշխույժ խայտանքը չէր թվում ծփանք.
Կարծես թե ջուրը
Իր կաթսան ընկած շեկլիկ աստղերի հրից էր եռում:

Բայց աստղե՞րն էին բոցկլտում այնտեղ,
Թե՞ ազատվելու հուսահատ ճիգով
Լող էին տալիս հազա՛ր ու հազա՛ր Վանա կատուներ՝
Վառվող աչքերով,
Թե՞ ցոլում էին հազա՛ր ու հազա՛ր քարեր թանկագին՝
Շարժելով Վանա ակնագործների նախանձը անկուշտ...
Իսկ ամենից վերջ՝
Երկնի ջատագով Մեծ Արջը իր մեծ փլավքամիչով
Ցած էր կռանում,
Անձայն ճողփյունով թաքուն ներսուզվում Վանա լճի մեջ,
Որ... թարմացընի նրա լազուրով
Գոռոզ երկրնքի գույները խամրած,
Սակայն... քամիչի ծակոտիքներից
Լազուրը նորից թափվում էր ներքև,
Եվ Վանա լճի համեմատությամբ
Երկինքը դարձյալ խամրած էր մնում
Ու մի՛շտ կըմնա...
Ա՛խ, Վանա ծովակ,
Բայց ախր քե՛զ ինչ երկնքի խամրելն ու չխամրելը,
Եթե քո շուրջը և քո քաղաքում
Ծնրադըրել է խավարը խոժոռ՝
Աղոթարարի ջերմեռանդությամբ,
Որ չհամենա՛, այլ հարատևի՛
Իր շողահալած իշխանությունը:
Իսկ քո հեռավոր - մոտավոր քույրը՝
Լիճը Սևանա՛...
Վարդապետ իմ խե՛ղճ,
Բայց և բախտավո՛ր,
Բայց և բախտավոր, որ չգիտեիր,
Թե իր սեփական արյունի գնով

Սևանա լիճը լույսեր պիտի տա ծերպերի՛ն անգամ՝
Հարուցանելով քարայծյամների դժգոհությունը և փոշտոցը,
Բայց և ո՛չ մի կերպ չկարողանա
Լույս տալ մթնախեղդ քաղաքին Վանա,
Վանա ծովակի խավար ափերին,-
Նրա հեռավոր - մոտավոր քույրը՝
Իր թանկ արյունը լույսի վերածած լիճը Սևանա...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ, խեղճ ու բախտավոր,
Եթե կարող ես՝ եկ մի խևանա...
-Համայն աշխարհում
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի,-
Ո՛վ էլ որ չասի՝
Աստվածաշունչը իր մագաղաթե դեմքը դեմ կանի
Ու կասի՝ կարդա՛:
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի:
Իսկ Արարա՛տը...
Է՛հ, անունը կա - ամանում չկա...
Վարդապետ իմ խեղ՛ճ,
Բայց և բախտավո՛ր,
Բայց և բախտավո՛ր, որ չգիտեիր,
Թե հայ կորովի երիտասարդներ՝
Լեռնագնացներ բարձունքներ սիրող,
Մասիսի դիմաց կնստեն գնացք,
Որ գնան Կազբեկ,
Էլբրուս գնան,
Լեռներ մագլցեն
Նույնիսկ հեռավոր սահմանի վրա հնդկառուսական,
Մինչդեռ Մասիսի լանջը կուսական
Մատնե՛ր է տենչում՝
Հայի տա՛ք մատներ,

Որ հպվե՛ն իրեն,
Իրեն գուրգուրե՛ն,
Իրեն ունենա՛ն...
Ու դեռ կան հայեր,
Որ հավատում են գոյությանն աստծո:
Թող գիտությունը նույնիսկ պապանձվի՛.
Աստծուն ժխտում է Արարա՛տն անգամ՝
Աստվածաշնչի սրբազան լեռը՝
Բախտո՛վ իր դժխեմ...
-Դե՛, մի՛ թոցըրու խելքըդ, Վարդապե՛տ...
Վարդապետ թշվա՛ռ, բայց և բախտավո՛ր.
Քո մտքով անցա՞վ, որ Մասիսն, այո՛,
Մեր նոր ու վերջին ոստանի առաջ,
Մեր հարենաքաղց աչքերի հանդեպ,
Կարծես թե դիտմամբ ու միտումնորեն
Մեզ անխղճաբար պիտի գրգռի՛,
Մեր փակված վերքը նորից-նոր բանա,
Մագնիսի նման անվերջ ձգելով՝
Գեթ մոտիկանալ թույլ չտա բնավ...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Ու մի՛ խենթանա...
Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի,
Քան թե կսկիծը որդեկորույս մոր:
Իսկ եթե դա էլ քիչ են համարո՞ւմ
Եվ սպանվածի դիակը, դիտմա՛մբ,
Տնկում են թշվառ մոր աչքի առջև՝
Ո՛չ թե մի շաբաթ,
Այլ ձի՛գ տարիներ...
-Դե՛, եթե մայր ես, եկ մի՛ ցնորվիր...
Մեզ լավ է ծանոթ ծաղրուծանակը այս հոգեխարտիչ,

Դա ծանոթ է մեզ քանի՛ դար արդեն:
Մեր հայրենասեր թագավորներին և հերոսներին
Այսպես պարսկական դահիճներն էին մորթազերծ անում,
Մեջը լցնելով դարման ու չոր խոտ՝
Խրտվիլակ շինում
Ու բռնի դնում
Մորթազերծվածին պաշտողի առաջ,
Որ... սքանչանան իրենք իրենցով...
Արարատն - այսպե՛ս - դրել են ահա Երևանի դեմ...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ...

ՂՈՂԱՆՋ ՑՆՈՐՄԱՆ

Եվ պատկերներից այս ահազարհուր, բայց և իրական
Նախ ցնորվեցին աչքե՛րը նրա
Եվ ապա մի՛տքը, մի՛տքը տիրական...
Վայրի աղմուկի,
Խոլ աղաղակի,
Ժխորի տեղակ
Մի գերեզմանվող լռություն տիրեց նրա հոգու մեջ.-
Գլուխը նրա,
Որ մի երկնային լուսատու էր ցարդ,
Հիմա փոխարկվեց մի մոլորակի.
Նույնն էր արտաքուստ,
Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, ինչպե՞ս էր նույնը,
Եթե լուսատուն... էլ լո՛ւյս չէր տալիս...
...Նա չհասցըրեց զոհել Վարդանին
Գոռ Ավարայրի ճակատամարտում,
Եվ ինքը զոհվեց.
Ա՛խ, ո՛ւր էր գոնե Վարդանի նման:

Մեր խաղ ու տաղի զորավարն ուժեղ
Վախճան ընդունեց՝ որպես նոր Մուշեղ,
Ում վերջին խոսքը նա գիտեր անգիր
Դեռ ճեմարանի առաջին տարուց.
-Բայց իբրև եհաս ինձ մահս վատթար,
Ո՛հ, թե՛ դիպեալ էր ի վերայ ձիոյ...
Մեր խարդախ բախտից՝
Նա չընկավ մարտում ու ձիու վրա,
Այլ զոհվեց անլուր դավաճանությամբ...
Մեր դժխեմ բախտից՝
Նա չհասցըրեց իր օպերայում
Թշվառ Անուշին խելացընորել,
Եվ ի՛նքը, ի՛նքը, ի՛նքը ցնորվեց...
Մեր դաժան բախտից՝
Սասնա ծռերին երգել չտված,
Նա ինքը դարձավ նոր Փոքըր Միեր
Ու դեռ կենդանի՛, ո՛ղջ-ո՛ղջ զնդանվեց
Հոգեբուժարան - Ագռավաքարում...
...Ով մազապուրծ էր մահից, Վարդապե՛տ.
Քեզ կորցընելու ցավից ահավոր
Աչքերըս լիքը լաց ա... մրմնջաց,
Առանց խոսքերի և անեղանակ
Էրվում եմ, էրվում այրվելով երգեց,
Սակայն... անօգո՛ւտ:
Ով առուփախով, գաղթով էր փրկվել,
Անզորությունից կրկին մոռացած
Հայի անարդար աստղծո հանդեպ
Իր քենը արդար՝
Երկնքին նայեց լուռ պաղատանքով,
Սակայն... ապարդյո՛ւն:

Ինչ եկեղեցի, որ չէր ավիրվել,
Եվ ամեն տաճար,
Որ ժամերգվում էր դեռ հայ աշխարհում,
Պատարագիչի դողդոջ շուրթերով
Պահպանիչ ասաց՝ կյանքիդ ի խնդիր,
Սակայն... չփրկե՛ց.
Հայացքըդ կրկին անկենդան մնաց,
Գլուխըդ, որ ցարդ լուսատու էր մի,
Դարձավ մոլորակ՝ պաղած ու անլույս...

ՂՈՂԱՆՋ ԱՆԱՆՑ ՍՈՒԳԻ

Պոլսին մոտիկ, Շիշլի դաշտում,
Երկու տարի զնդանվեց նա,
Որին մի ողջ ազգ էր պաշտում:
Բժշկո՛ւմ են...
Ի՞նչ են բուժում.
Ուղեղի՛ վերք,
Մթագնած մի՛տք,
Որ մնում է թանձըր մուժում...
Ովքեր նրա միտքը պաշտում
Եվ կորստին դեռ չեն հաշտվում,
Ուղարկում են նրան Փարիզ:
Փարի՛զ, Փարի՛զ...
Երկու տարի դեռ չի անցել,
Ինչ նա այդպես քեզ էր գալիս,
Որ իր ձայնով, սրինգ-փողով,
Որ իր մտքով, խելքով պայծառ
Գերեր մի ողջ Համաժողով:
Փարի՛զ, Փարի՛զ...

Հիմա դարձյա՛լ,
Վերստին է նա քեզ գալիս՝
Ո՛չ երգելու, նվագելու,
Ո՛չ հիացմունք հավաքելու,
Նա՝ մարմրող ու վիրավոր՝
Էլ թև չունի, որ հաղթ սուրա,
Էլ հուր չունի, որ հուրհուրա...
Ո՛չ «բռավո»,
Ծափուն «ուռա»,
Եվ ո՛չ էլ «բիս»:
Փարի՛զ, Փարի՛զ...
Գալիս է նա, որ միտք մուրա...
Փարի՛զ, Փարի՛զ...
Եղիր բարի՛,
Ի սեր աստծո՝ գթա՛ծ եղիր,
Այս ծուռ ճամփից նրան շեղի՛ր
Ու բեր շիտակ ճանապարհի.
Այնպե՛ս արա, որ նա դարձյալ
Քեզ ողողի մտքով պայծառ,
Որ երգերով սիրտդ վառի,
Նվագի փող,
Շորոր պարի...
Բայց խեղճ Փարիզն ի՞նչ դեղ ճարի,
Ինչպե՞ս փրկի քո հանճարին,
Թե մեկնելիս, նավի վրա,
Աշակերտներն իր սիրասուն
Ծաղկեփունջ են տալիս նրան,
Իսկ նա... նրանց բառ չի ասում,
Ոչ էլ ժպտում բարի՛-բարի՛,
Իսկ նա... փունջը չի հոտոտում,

Այլ - անտարբեր - ծովն է նետում՝
Պաղ հայացքը՝ սար ու քարին...
...Տարվա հետքով սողաց տարին,-
Բուժում չկա՛ քո հանճարին...
Տարվա հետքով տարին գնաց,-
Եվ խազերը մեր հինավուրց,
Որոնց ամբողջ տաժանակիր քսան տարի
Նա մայրական իր ջանքերով
Անխոնջորեն ոտքի հանած՝
Քայլելու էր վարժեցըրել,
Դրել ուղիղ ճանապարհի,-
Նույն խազերը հիմա դարձյալ
Քար կտրեցին ու կոնդացան.
Ինչ արված էր երկար ու ձիգ քսան տարում՝
Չար մի հողմով ցրիվ եկավ քար ու սարում...
Տարիների ոտնահետքով
Նոր տարիներ վրա հասան.
Մեկ-տասնըմեկ՝ դարձան քսա՛ն:
Տարվա հետքով տարին գնաց,
Իսկ նա՝ մեռած անթաղ մնաց:
Քսա՛ն տարի անթաղ մնաց
Մի սո՛ւրբ դիակ,
Սուրբ ու միա՛կ...
Տարվա շունչը տարվա հևքին՝
Մեկը մեկից սկիզբ առան,
Իսկ նա՝ նման Զմրուխտ հավքին,
Նման հավքին մեր Հազարան՝
Ո՛չ գնդակված,
Ո՛չ էլ մորթված,
Այլ ճակատի բութ հարվածից ուշակորույս.

Քսան տարի լուռ թպրտաց՝
Գոնե...
Գոնե չթողնելով հնարք ու հույս
Փարատելու մեր ցավը խոր,
Ավարտելու կոծն ու սուգը,
Մեր հոգու մեջ չորացնելու
Սանդեր փորող արտասուքը...
Քսա՛ն տարի մեռած-անթաղ,
Ե՛վ մահացած, և ողջանդամ
Մի սո՛ւրբ դիակ,
Սուրբ ու միա՛կ...